

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.՝
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր: ԱՊՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիւր-
քիա: Ֆրանսիա: Յունաստան: ԻՒՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ:
— ՀՆՈՒՎԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Գառիթ բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 26 յունվարի

Հայերի մի դարմանալի սովորութիւնն էլ այն է, որ սկզբում մի օր և է գործին շատ վերջ պիտի կազմուի են, աշխատում են կազմակերպված ընկերութիւններ սարքել այդ գործը դուրս տանելու համար, բայց երբ կազմվում է ընկերութիւնը, անցնում է մի փոքր ժամանակ, և յանկարծ մի անհրաժեշտ ստանութիւն, անտարբերութիւն է առաջ գալիս: Միւս կողմից այս ևս անհրաժեշտ իրողութիւն է, որ հայերը խմբովին դուրս ձել չը դիմեն, մեր աղբային գործողների մէջ չը կայ համարաշխարհիւն, չը կայ բարոյական կապ, ուստի և ընդհանուր այժմով գործելը, ընդհանուր գործին անկեղծութեամբ, անաշուտութեամբ, ստանադարտութեամբ անձնատուր լինելը, հայերի մէջ հազարալիտ գործ է: Կրանով բացատրվում է դուրս այն օտարոտի երեւոյթը, որ մեր մէջ միայն այն գործերն են առաջ ընթանում, որոնք անհատական այժմերի վրա են հիմնված:

Իբրև ստացուց իմ ատանին, ես կը խօսեմ այստեղ Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան գործունէութեան մասին: Մտտ երկու տարի է, որ այդ ընկերութիւնը հիմնվել է և չը նայելով, որ սկզբում ամենամեծ յոյսեր էր տալիս, բայց չը կարողացաւ մինչև

անգամ այնքան արդիւնաւէտ լինել, ինչքան եղել էր մի մասնաւոր անձ, երբ ձեռնարկեց հրատարակել մի քանի գրքեր: Ամբողջ երկու տարուայ ընթացքում ընկերութիւնը իր կողմից միայն չորս գիրք է հրատարակել, այն է Պատմ. Մովս. Խորենացու, որը իսկապէս արատաւել է, «Ռօբինզոնի պատ.», «Մօրիս Բլոկի» ձեռնարկը և «Ռիտուալը»: Մնացեալ 8 հրատարակութիւնները եղել են մասնաւոր անձանց ձեռքով դեռ ընկերութեան գոյութիւնից առաջ: Ընկերութեան ղեկավարական գործունէութիւնը միայն այն է ստացուցանում, որ չը պէտք է այդպիսի հաստատութեանց համար այնպիսի անձանց ղեկավար ընտրել, որոնք աւելի յարմար են առեւտրական գործերին: Եւ ճշմարիտ, Թ. ընկ. հ. զըրը. հրատ. գործունէութիւնը արժանի է ամենայն յանդիմանութեան: Նա, կարծէք, հիմնված է նրա համար միայն, որ մի քանի պարսկերէն, որոնք «Փորձի» մէջ մի քանի յօդուածներ գրելով կարծում են թէ ամբողջ հայ ազգը պարտաւորացրել են, ընկերութեան հրատարակելի գրքերի սրբագրութեան պատրաստելով հարկերն ստանալու: Ինչ մի ստիտղղական կարիք կար փող ծախել և Մովսէս Խորեն. պատմութիւնը արտատպելով դրա համար պ. Պալատանտանին, «Փորձ» ամսագրի աշխատակցին՝ 400 ռուբլի տալ իբրև սրբագրութեան վարձ, քանի որ Մովսէս Խորենացու Վէնետիկ տպագրութիւնը կայ: Եւ դեռ արդարանում են մարդիկ անելով թէ ընկերութիւնը չունի նիւթական միջոցներ: Ընկերութիւնը միջոց է գրտանում սպել տալ Մովսէս Խորենացու պատմութիւնը, «Ռիտուալը», Մօրիս Բլոկի պէս մի ձեռնարկը քաղաքական անտեսութեան, մինչդեռ ուսանողը Հրապարակ «Վնասակար միջոցներ» ռուշիւրը վեր ընկած մնում է, մինչդեռ մեր զգրոցները դուրկ են պիտանաւոր դասադրերից: Մի ուրիշ, բայց ամենազրկաւոր պակասութիւնն այն է, որ ընկերութեան վարչութիւնը ինչն էլ

հասկանում թէ ինչ պէտք է գործել. նա չունի գործունէութեան մի որոշ նպատակ, նա չէ հետաքրքրվում իմանալ թէ որ տեսակ գրքեր աւելի հարկաւոր և անհրաժեշտ են հայ ժողովրդեան: Քանի որ ընկերութիւնը չունի առատ միջոցներ, նա պէտք է միայն մի ճիւղ ընտրէ իր համար և այն է, կամ ժողովրդական գրքեր ի լոյս ընտարակէ և կամ ժողովրդական ճիւղերը ժողովրդականացնել ընթերցող հասարակութեան մէջ: Որինակ, ինչ հիմնալի բան կը լինէր, եթէ ստույգապահութեան վերաբերեալ մի քանի բրօշուրներ հրատարակվէին և քաղաքներում ու գիւղերում ցրվէին: Ընկերութիւնը, չորսհիւ և ջանացութեամբ Աւետիք Բարախանցի, մի երկու այդպիսի բրօշուրներ հրատարակութիւնը իր հաշիւն է աւել, բայց նա կարծէր դիտմամբ այդ գրքերը չէ ցրվում, որպէս զի առիթ ունենայ արդարանալու և ազատուցանելու Բարախանին թէ չը պէտք է այդպիսի բրօշուրներ հրատարակել: Ես հաստատապէս դիտեմ, որ եթէ օրինակ, «Նեղ և խոնար բնակ.» բրօշուրը ուղարկվէր Վարաբաղի թէնը, այդտեղ առ նուազին 200 օրինակ կը տարածվէր: Չընտրելով հրատարակութեան մի որոշ ճիւղ, ընկերութիւնը միայն սպում է այն գրքերը, որոնք պատահամբ ուղարկում են իրեն, կամ որոնց համար առանձին միջոցներ են լինում, կամ թէ որոնց հեղինակները բարեկամական յարաբերութիւն են ունենում ընկերութեան անդամների հետ, ուստի և այդպիսի պատահական հրատարակութիւնները շատ քիչ օգուտ կարող են արտադրել: Այս բոլոր պակասութիւններից յետոյ, որոնք առաջ են գալիս ղեկավարների անընդունակութիւնից, մենք պէտք է հասարակութեան ուշադրութիւնը դարձնենք և այն հանգամանքի վրա, որ ընկերութիւնը հարկաւոր չէ համարում, ինչ

պէս երևում է, իր գործունէութեան հաշիւը հրատարակել: Այդ ընթացքը պատիւ չէ բերում վարչութեան, որը դրանով իրոյս է տալիս հասարակական կոնտրոլից: Միւս կողմից՝ այնպիսի գրքեր է հրատարակում, օրինակ Մօրիս Բլոկի քաղաք. ստու. ձեռնարկը (Թարգ. Պալատանտանի) որոնք ոչինչ օգուտ չեն կարող տալ հայ հասարակութեանը: Այս մեր կարծիքը մենք մի առանձին յօդուածով կապացուցանենք, երբ պատիւ կունենանք ընկերութեան գործունէութեան հաշիւը հրատարակած տեսնել: Իսկ առ այժմ մենք կը ցանկանանք, որ գոնէ ապագայում ընկերութեան գործերի ղեկավարութիւնը աւելի հմուտ և ընդունակ անձանց ձեռքը անցնէր, որով նա կարողանար մի իրական օգուտ տալ ազգային մասնաւորութեան և առհասարակ նպատակի ընթերցանութեան տարածման: Մենք կը բարենայթիւնը նոյնպէս, որ վերջապէս հասնէր հայերի համար այն ժամը, երբ ինքնահասակութիւնը հազարալիտ բան չը լինէր և մարդիկ միայն այն ժամանակ յանձն առնէին որ և ինչ մի գործի ղեկավարութիւնը, երբ իրանց մէջ զգային ընդունակութիւն և կարողութիւն բարեկարգաբար և աղնութեամբ այդ գործը առաջ տանելու:

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի օր, յունվարի 28-ին, տիկին Հրապարակ ընկերութեան, Թիֆլիսի հայոց թատրոնական խումբը ներկայացրեց «Վիլիսիս» պիէսան, հեղինակութիւն Օկտավ Գեօլիէի, թարգմանութիւն Ֆրանսերէից օրիւրը Նիլաբաբէի Նազարբեկեանի:

ԴԱՆԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Ի Է.

Օրհասական գիշերը անցաւ, կրակի, կոտորածի գիշերը: Վաղորդան արեգակը իր ուշաքի ձառադայթնը տարածեց մոտիկ դարձած բերդաքարերի աւերակների վրա:

Բերդից ոչ այնքան հեռու, հայոց բանակաւորում կազմված էր մի առանձին վրան: Այդ վրանը տարաւարի ձև ունէր, համարեա մի և նոյն ձևը, որ մինչև այսօր էլ կարելի է տեսնել Միւսեաց աշխարհի խաչնապած գիւղերի մօտ: Երջապարտ հիւսած էր եղեգնիւրով, իսկ առաստաղը ձածված էր թանձր թաղիքներով, որ տարածել էին բարակ, ձեռն ձողերի կտրած և կամարների վրա *):

Վրանում նստած էր Ներսէս սրբազանը, իսկ նրա հանդէպ չըբած էր խանի ձերբանի վեղիքը: — Ես, սրբազան, խօսեց նա.— դիմում եմ ձեզ ոչ իբրև վեղիք և ոչ իբրև մի պաշտօնական անձն, այլ իբրև մի հասարակ մարդ սիրտը լի ցաւերով ու վշտ եր ու վ:— Կրնում եմ ձեզ այն յուսով, որ հաւատացած եմ, իմ ազգանքները աւելի ձեռնառնութեամբ ընդունելութիւն կը դանեն մի հողտրտակաւորի մօտ, որի պաշտօնն է քարոզել զթութիւն, որդրանաւթիւն և խիղճ, որի կոչումն է ներքին թշնամուն, որին ծանօթ չէ ո՞ր, ստեղծութիւնը, նախանձը:— Ես դիմում եմ ձեզ որպէս Յիսուս Քրիստոսի աշակերտի և նրա վարդապետութիւնը ժողովրդին քարոզողի, նախ Յիսուս Քրիստոսի:

որ ասում էր. երանքի ողորմածներին, որովհետև նրանք ողորմութիւն կը գտնեն: Ողորմեցէք մեզ սրբազան, ընկած մարդուն այլ ևս ստբով չեն լըբփում: Բէկը կընդունէ ձեր խորհուրդները, օգնեցէք ինձ խնդրել նրանից, որ դարաբացնէ կոտորածը: Այդ մարդիկը, թէ և ձեր կրօնից չեն, բայց Աստուծոյ ստեղծվածներ են: Աստուծոյ շատ հաճելի չի լինի, երբ անասունների, միջատների հետ անգամ անգիտութեամբ են վարված:

— Ձեր խօսքերը շատ գեղեցիկ են, վեղիք, պատասխանեց սրբազանը նրան ուշադրութեամբ լըսելուց յետոյ.— և ես ուրախ եմ, որ դուք այնքան կարողացած էք երևում, որ լաւ բնբւնել էք մեր կրօնի ոգին: Բայց այն բանը, որ կուզեմ էք անգիտութիւն, դուք ինքնեղջ ուղղորդելով մեզ: Վարժապետը չի պիտի նախատէ իր աշակերտին, երբ նա նոյնն է գործում, ինչ որ ստիտղղ է իր վարչակալից:

— Ի՞նչպէս մենք սովորեցրինք, հարցրեց վեղիքը:

— Այն, դուք սովորեցրէք. ես այս բովելիս կը բացատրեմ ձեզ: Այդ դաստիարակութիւնը կատարելիք դուք բոլորովին անգիտակցաբար, ոչ թէ մի տարիք մէջ, այլ շատ դարերի ընթացքում: Գուք մի մտապէք, որ դուք մի գաղթական հիւր էք մեր երկրում, այն անհայտնաւալ հիւրերից մէկը, որ տան տիրոջը սպանում է, իսկ ինքը սկսում է տարանալ նրա օջախի կրակովը: Այդ սպանութիւնը գործեցիք դուք: Այդ երկիրը պատկանում էր մեր նախնիներին: Այստեղ մենք ունէինք մեր թագաւորութիւնը, մեր իշխանութիւնը: Բայց ընդհանրիւր դուք: Մեր հայրենիքում մի քար չէ մնացել, որ դուք չը ներկէիք մեր պապերի արիւնքով. մեր հայրենիքում մի տանար չէ մնացել, որ դուք հարիւր անգամ քանդած չը լինէիք: Ողբան կամեցաք կոտորելիք, որքան կամեցաք ոչնչացրէք: Հայաստանի եռեսուն միլիոն հայ բնակիչները թողեցիք հինգ միլիոն միայն. այդ ևս այն մտքով, որ նրանց կենսանի մահացնէք, որ նրանց մերկ ու քաղցած թողէք, իսկ ինքները նրանց

աշխատանքով ապրել կարողանաք: Գուք ջանկիր լանի, Մանգո-խանի, Հուլազու-խանի, Լէնկ-թէ-մուրի և այլ այդ տեսակ հրէշների մեղ մօտ բերած զազանների չար կորիւններն էք: Գուք մեր աշխարհը աւերակ դարձրէք, իսկ Թաթարստանը, Մոզորստանը, Ալգանստանը լցրէք մեր երկրից տարած գերիւնրով: Ես եթէ ամբողջ օրիւրով խօսի ձեզ հետ, դարձեալ չէի կարող աւարտել այն բոլոր բարբարոսութիւնների ազդեաւոր պատմութիւնը, որ դուք և ձեր նախնիքը կատարել էք մեր հայրենիքում: Մեր կնիկներին, մեր աղջիկներին, մեր երեխաներին, մեր ընտիր տղամարդերին հազարներով լեցնում էիք Աստուծոյ տաճարների մէջ, կրակ էիք տալիս և այրում էիք: Ձեր պատերից մէկը կործանեց մեր դքանելի մայրաքաղաքը Ալին. այնքան կոտորել տուց, որ փողոցների միջով արեան վառակներ էին վազում: Բայց դուք նազարաւոր ծծկեր երեխաներ, նրանց արիւնով լցրեց մի աճաղին լճակ, մտաւ այդ լճակի մէջը լողացաւ, որ գրանով զովանցն սրտի բարկութիւնը: Ձեր բարբարոսութիւնը, բացի մարդկիներից, տարածվեցաւ և մեր երկրի վրա: Մեր երկիրը մի ծաղիկալ դրախտ էր, բուսուցանում էր Աստուծոյ չնորհած բոլոր բարիքները: Բայց դուք նրան բուլլովին անապատ դարձրէք, Միջին Ասիայի տըխուր անապատների նման, որտեղից որդոս էին եկած ձեր նախնիքը: Մեր հարուստ քաղաքները կործանեցիք, մեր շին գիւղերը աւերակ դարձրէք, մեր վաճառականութիւնը, մեր արհեստը, մեր հարտարութիւնը ոչնչացրէք և ամեն տեղ տարածեցիք աղքատութիւն ու սով: Գուք, անապատի դաւակներ, սիրում էք անապատ, անապատիւն և մահացութիւն: Ձեզ համար անտանելի է ծաղիկալ կեանքը, մարդկային երջանիկ բարօրութիւնը և աշխատանքի ժողովրդի արդիւնաւոր գործունէութիւնը: Գուք սիրում էք իշխել միայն աւերակների վրա: Ամեն ինչ, որ լաւ էր, ամեն ինչ, որ օգտաւէտ էր, դուք ինչեղ մեղանից, իսկ փոխարէնը տուե-

ցիք մեզ ձեր վարկենութիւնը, ձեր անկրթութիւնը: Եւ այժմ դարմանում էք, որ մենք վարվում ենք ձեզ հետ մի և նոյն եղանակով, ինչպէս դուք վարվել էք մեզ հետ հազարաւոր տարիների ընթացքում:— Հիմայ հասկանում էք, որ դուք ինքները այդպէս դատաւարակեցիք մեզ, որ դուք ինքները սովորեցրէք մեզ անգիտութիւնը:

— Հատկանում եմ... պատասխանեց վեղիքը:— Բայց որդին ինչու է մեղաւոր, որ սուս է իր պատերի յանցանքների համար:

— Որդին մեղաւոր չէր լինի, եթէ ինքն էլ մի և նոյն կերպով չը գործէր, եթէ ինքն էլ չը շարունակէր իր պապերի բարբարոսութիւնը, ասաց սրբազանը:— Գուք չը փոխկեցաք, դուք մնացիք նոյնպէս անկրթի, նոյնպէս փայլունի, որպէս էիք հաւրաւոր, դուք մնացիք մի և նոյնը:

— Ի՞նչու չը կրթեցիք մեզ, քանի որ դուք ձեր քաղաքակրթութեամբ աւելի բարձր էիք մեղանից, հարցրեց վեղիքը:

— Այդ մեր յանցանքն է, պատասխանեց սրբազանը:— Բայց ձեզ կրթելու համար մի մեծ դժուարութիւն, մի մեծ արդեւք կար: Ձեզ կրթելու համար հարկաւոր էր նախ ձեր ձեռքից իսկ սուրը մենք բուռական ուժ և պատրաստակամութիւն չունէիք: Մի ժողովուրդ չէ կարող կրթել միւսին, երբ ինքը գտնուում է նրա իշխանութեան ներքոյ: Վարժապետը պէտք է ազատ լինի իր աշակերտների վերաբերութեամբ: Մենք ձեզ կարող ենք կրթել, երբ դուք մեր հպատակներ կը լինէք:

— Այդ անկարելի բան է, ասաց վեղիքը դառն ժողովուրդ:— Իսլամը չէ հպատակում, իսլամը տիրում է, իշխում է...:

Նկատելով որ իր վերջին պատասխանը անախորժ տպաւորութիւն գործեց սրբազանի վրա, նա փոխեց խօսքը, ասելով.

— Սրբազան, ես համաձայն եմ ձեզ հետ, որ մեր նախնիքը և մենք ինքներս վատ ենք վարվել

*) Այդ տեսակ վրանները կազմում են ալա-
հուդէ թէ հայերի և թէ թիւրքերի մօտ մի և
նոյն ձևն ունեն:

նում եղանակը շատ փոփոխական է: Յունական ճիւղի երկը որ ու դիշեր ցուրտ անձրևներ էին գալիս, ահապէս որ շատ բնակարաններ քանդուցան և առաստաղներ փլատակների տակ մի քանի մարդիկ մեռան: Մերձակայ Շէմրան սարի վրա բուսական ձիւն է եկած:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻԱ

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են: Զանազան հանգամանքների շնորհիւ սուլթանը դառնացած էր Անգլիայի դէմ: Այժմ այդ զգացմունքը այնքան սաստկացել է, որ, ինչպէս նորերումս յայտնեց այստեղի քաղաքագէտներից մէկը, սուլթանը աւելի թշնամաբար է վերաբերում Անգլիային, քան թէ Ֆրանսիային: Այդ թշնամութեան առաջին պատճառը Անգլիայի վարմունքն է ուսուցիչական վերջին պատերազմի ժամանակ: Թէպէտ անգլիական կառավարութիւնը պաշտօնապէս յայտնեց, թէ ինքը չէզոք կը մնայ և թէ 'ի նկատի կուեննայ միայն իր սեփական շահերը, այնուամենայնիւ Հէնրի Լայարը շատ անգամ հաստատեց, որ նրա մասնաւոր կարծիքի համեմատ, Անգլիան չի իրագործի այդ քաղաքականութիւնը և ստիպւած կը լինի Թիւրքիային գործնական օգնութիւն հասցնել: Սուլթանը չէր կարող հաստատել որ Լայարը ճշմարիտ միայն իր մասնաւոր կարծիքն է յայտնում, մանաւանդ որ այդ ժամանակներում զնդապետ Վոլֆօնից եկաւ Կ. Պօլսի և պաշտօնապէս հարցրեց բանկիր Գանսօնից, թէ որքան ժամանակ հարկաւոր կը լինի Գարգանիւն մէջ պատերազմական պատրաստութիւններ տեսնելու համար: Գանսօն իր կողմից դիմեց կառավարութեանը նոյն հարցով և, թէպէտ Անգլիան ուղղակի չը խախտեց իր չէզոքութիւնը Թիւրքիայի վերաբերութեամբ, բայց դրանից համարժեք ծագեցաւ, որ Անգլիան նշանաւոր դեր

կը խաղայ պատերազմական բեմի վրա: Բաւական չէր, որ Թիւրքիայի յոյսերը այդ գործի վերաբերութեամբ 'ի դուր անցան, սուլթանը աւելի էլ զայրացած էր, երբ Գուլթիսի գործի ժամանակ Անգլիան առաջարկեց ծովային ցայցեր անել նոյնպէս և Զմիւրնիայի մօտ: Բայց այդ, անգլիական հիւպատոսը Վայրիէի մէջ, վերադառնալով Լօնդօնից, այցելեց Կ. Պօլսի և հաստատեց սուլթանին, թէ Անգլիան մտադիր է ամրացնել սուլթանի ազդեցութիւնը Եգիպտոսի մէջ, մինչդեռ Վայրիէի առաջ ցայց գործերուց յետոյ այդ պետութիւնը հետեւեց հակառակ քաղաքականութեանը: Ուրիշ շատ փաստեր էլ նպաստում էին սուլթանի անբաւականութեան սաստկանալուն: Որինակ, մի անգամ անգլիական դեսպան Գօշէն եկել էր պալատը անայնի հազուստով: Ճշմարիտ և անգլիացիները օրվայ ընթացքում երբէք սև հագուստ, մանաւանդ Ֆրակ չեն հագնում, բայց այնու ամենայնիւ Գօշէնի վարմունքը սուլթանին յանդուգն երևաց: Գօշէն ամենից մեծ անբաւականութիւն բարձրացրեց նրանով, որ Թոյլուութիւն խնդրեց ներկայ գտնուել բայրամի հանդիսին: Թոյլուութիւնը ստիպեցաւ և Գօշէն եկաւ կրօնական հանդիսին դեսպանատան քարտուղարների և վեց կանանց հետ, որ շատ զարմացրեց սուլթանին: Անբաւականութիւնը աւելի էլ սաստկացաւ, երբ այդ կանայք գոռան զոհեցան հանդիսին այնպէս էին նայում, ինչպէս թատրոնական ներկայացմանը: Այս տարի դեսպանատանը թոյլ չը տուին ներկայ գտնուել բայրամի հանդիսին և դրա համար պատճառ բերին Գօշէնի վարմունքը: Սուլթանին ներկայացած բոլոր անգլիացիները միշտ ցայց են տուել իրանց ազգային հպարտութիւնը, մինչդեռ միւս ազգութիւնների ներկայացուցիչները աշխատել են փոքրի շատ և յարմարակ առեւտրական սովորութիւններին: Ժանդարմների բաժնի մէջ ծառայող անգլիացի օֆիցերները անգլիական դեսպա-

նատանը զեկուցումն ուղարկեցին գործերի գրութեան մասին նահանգներում որոնց նրանք այցելեցին սուլթանի յանձնարարութեան համեմատ: 'ի հարկէ այդ գործը բացարձակ կատարվեցաւ, առանց դաւաճանութեան, բայց որովհետեւ Թիւրք կառավարութիւնը այլ ևս դաշնակից չէր համարվում, այդ գործն էլ վատ սպաւորութիւն գործեց: Բոլորովին ուրիշ կերպ էին վարվում գերմանացի աստիճանաւորները, որոնք Բ. Գուլթը հրաւիրել էր և որոնք կատարեալ հասարակարմութեամբ էին ծառայում սուլթանին: Յունական հարցի լուծվելուց յետոյ անգլիական դեսպանատանը սկսեց խօսել Հայաստանի մասին: Բայց այդ անգլիացիները անդադար գանգատվում էին, պաշտպանում էին անգլիական հպատակներին և խոսուվում էին ամեն տեսակ գործերի մէջ, մի խօսքով նրանք անտանելի դարձան: Սուլթանը այդպէս էր տրամադրված, երբ լուր ստացաւ, որ Անգլիան և Ֆրանսիան զիմել են երկպառակն խեղդիլին և յանձն են առել հովանաւորութիւնը Եգիպտոսի վրա: Ինչպէս երևում է ներկայումս Թիւրքիան աւելի վատ յարաբերութիւններ ունի Անգլիայի հետ, քան թէ բոլոր միւս պետութիւնների հետ:

ՅԲԱՆՍԻԱ

Փարիզից յունվարի 27-ից լրագրիւններին հարցրում են հետեւեալը: Երեկ երեկոցեան 9 ժամին Գամբետտա և բոլոր մինիստրները ձաշեցին Գրեվիի մօտ: Գամբետտա ուրախ և հանդիստ էր և մնաց նախագահի մօտ մինչև 11 ժամը: Նա յայտնեց, թէ իր անկման պատճառը ոչ թէ ընտրութիւններն են ցուցակների համեմատ, այլ սահմանադրութեան վերաբնութեան հարցը: Նոյն բանը այսօր գրում են նրա լրագրիւնները: Բայց այդ յայտնութիւնը ճշմարիտ չէ, որովհետեւ ընտրութիւնների ժամանակ իր արտասանած ձառնքով նա վճռողականապէս պաշտպա-

նում էր պատգամաւորների և սենատի անդամների ընտրութեան ձևի փոփոխելը: Հասարակական կարծիքը առհասարակ Գամբետտայի կողմը չէ, որ օչնչացրեց նրա վրա դրած մեծ յոյսերը և երկրին նոր դժուարութիւններ պատճառեց:

Գամբետտայի լրագրիւնները սաստիկ զայրացած են: «Republique Française» լրագրիւրը նկատում է, թէ սահմանադրութեան վերաբնութեան համար ընտրված պատգամաւորների ժողովը այդ վերաբնութիւնը անկարելի դարձրեց: Վարված լինելով վերանորոգութիւններ իրագործելու համար, պատգամաւորների ժողովը դաւաճանեց այն մինիստրներին, որոնք վերանորոգութիւններ էին առաջարկում: Պատգամաւորների ժողովը Գամբետտայի մինիստրութիւնը պէտք է փոխարինէ այնպիսի կառավարութեամբ, որ կենսական աւելի մեծ ցոփեր ունենայ և կարողանայ երկարատե լինել: «Union Republicaine» լրագրիւրը նկատում է՝ «մենք տեսնք ստույգ անկարելի յաղթութիւն ճշմարտութեան դէմ, որ մեզ ստիպում է կարմրել»: Պատգամաւորների ժողովի նախագահ Բրիսօնի օրգան «Siccle» լրագրիւրը գովարանում է Գամբետտայի հետեւորական տաղանդը և նկատում է, որ մինիստրութեան անկման պատճառը միայն բաւ երեւոյթին սահմանադրութեան վերաբնութեան ձևն էր, բայց իսկապէս այդ անկման պատճառը ցուցակներով ընտրութեան հարցն էր: Գամբետտայի բարեկամները պնդում էին, որ նա ընկաւ, պաշտպանելով չափաւորութեան սկզբունքները, բայց վաստակը դրան հակասական է: Պատգամաւորների ժողովը ընդլիմացաւ մինիստրութեանը, որպէս զի ժողովի արձակման առաջն առնէ, պաշտպանէ իր արժանաւորութիւնը և երկիրը նոր պատահարներից: Կլեմենտի «Justice» լրագրիւրը պնդում է, որ Գամբետտա առ յաւիտեան կորցրեց իր հեղինակութիւնը և ժողովրդի սէրը:

ձեր ազգի հետ: Ես բոլորովին արդարացեալ եմ այն պատճառները, որ ստիպեցին ձեզ սուր բարձրացնել մեր դէմ: Բայց երբէք չեմ կարող իրաւացի համարել, երբ դուք կանցնէք չափն ու սահմանը մարդկային խղճի, և յաղթող մարդու մեծահոգութիւնը կը փոխարինէք բարբարոս անգլիութիւնով:

— Ես բացատրեցի ձեզ, որ այդ անգլիութիւնը ձեզանից սովորեցինք:

— Այդ ուղիղ է, բայց քրիստոնեային վայել չէ, ասաց վեզիւրը: — Ես կը պատասխանեմ ձեզ ձեր կրօնի վարդապետի խօսքերով. դուք պարտաւոր էք ձեր թշնամիներին սիրել, դուք պարտաւոր էք ձեր անիծողներին օրհնել, դուք պարտաւոր էք ձեր ատելիներին բարութիւն անել, դուք պարտաւոր էք աղօթել նրանց համար, որ միշտ նեղացնում են, որ միշտ չարարում են ձեզ:

Արքայազնը սկսեց ծիծաղել:

— Այդ բոլոր պատուիրանները մենք կատարել ենք, վեզիւր, աւելի քան հազար տարի մենք հնազանդ էինք այդ պատուիրաններին: Բայց փոխանակ չահվու, նրանց մէջ գոտանք մեր զօրազորութիւնը: Մեր վիճակը աւելի և աւելի ծանրացաւ: Մենք կորցրինք բոլորը, ինչ որ ունէինք, և վերջապէս օտարի լծի տակ սարուկ դարձանք: Մենք կարծում էինք, թէ սիրելով մեր թշնամիներին, բարութիւն անելով մեր ատելիներին, այսպիսով կը փափկացնենք նրանց բարք ու վարքի կոշտութիւնը, կը մեղմացնենք նրանց վայրենութիւնը և փոխադարձապէս սէր կը վախճելինք նրանց կողմից: Բայց կեանքի փորձի մէջ ընդհակառակն եղաւ: — Մենք հաստատուեմ մնացինք մեր փրկչի նրամանին, ով որ մեր ձախ երեսին ապաստով դարձրեց, աչիս էլ շուտ տուեցինք, ով որ մեր շապիկը պահանջեց, մեր պատմութեանն էլ նրան տուեցինք: Բայց արդիւնքն ինչ եղաւ: — Այն, որ մեր հնազանդութիւնով, մեր զոհարարութիւններով աւելի լրացրինք մեր թշնամուն, աւելի զրգուցեցինք նրա կատաղութիւնն ու ընչա-

քաղցութիւնը: Մեր խնայարժութիւնը, մեր հեղուցութիւնը նկատելով, մեր թշնամին աւելի բռնացաւ. մեզ վրա և աւելի սաստիկ կերպով սկսեց ճնշել, որովհետեւ մեզ Այդ էր պատճառը, որ մենք վերջի վերջի խեղճի եկանք, սկսեցինք մեր թշնամիներին հետ վարվել նոյն կերպով, ինչպէս նրանք են վարվում: Ես այդ վարմունքը դուք ինքնուրու սովորեցրեք մեզ:

Վեզիւրը ոչինչ չը դատա պատասխանեց:

— Ասացէք, խնդրեմ, հարցրեց սրբազանը: — Դուք ինչպէս կը վարվէք մեզ հետ, եթէ այդ կուրի մէջ յաղթութիւնը ձեր կողմը լինէր:

— Մենք ձեզ կը կոտորէինք:

— Այսպիսով էք դատապարտում մեր մէջ մի նոյն վարմունքը, երբ յաղթութիւնը մեր կողմն է:

— Նրա համար, որ ձեր կրօնը ձեզ հրամայում է ներել, իսկ մեր կրօնը մեզ հրամայում է կոտորել:

— Դուք դարձեալ կրօնի վրա էք հիմնում ձեր պատասխանները:

— Որովհետեւ կրօնաւորի հետ եմ խօսում:

— Այն, կրօնաւորի հետ էք խօսում, ասաց սրբազանը: — Բայց մի մոռացէք, որ այդ կրօնաւորը միայն է իր մէջ թէ պատերազմող և թէ աղօթող մարդու յատկութիւնները:

— Այդ ես աչքի առաջ ունեմ, պատասխանեց վեզիւրը: պահանջելով իր սահմանադրութիւնը: — Բայց մի հարց եմ առաջարկում ձեզ. ինչպէս կը վարվէր Աստուած յանցաւոր Սողոմի և Գոմորի հետ, եթէ գտնուէր լինէր նրանց մէջ զոհն մի քանի արդար մարդիկ:

— Այդ քաղաքները այլ ևս չէր այրի կրակով, պատասխանեց սրբազանը:

— Ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ: Մեր նախնիքը և մենք նոյնպիսի յանցաւորներ ենք եղել որպէս Սողոմի և Գոմորի չարագործները: Բայց եթէ մի մարդ եղել է այդ բերդի մէջ արդարաւոր, ճշմարտասէր և զթաժ դէպի տառապեալ-

ները, միթէ դուք այդ մի մարդու համար չէիք խղճայ միաներին:

— Ո՛վ է այդ մարդը:

— Նա, որ խօսում է ձեզ հետ: Սրբազանը ստույգութեան մէջ ընկաւ: Վեզիւրը ասաւ՝ ապաւս իր խօսքը:

Ես ձեզ չեմ խաբում, սրբազան, և խաբելու սովորութիւն երբէք չեմ ունեցել: Գուր կարող էք տեղեկանալ բոլոր հայերից, որ բնակվում են այդ երկրում, դուք կարող էք հարցնել բոլոր հայ զինուորացիներից, որ գտնվում էին մեր իշխանութեան ներքոյ: Ես եղել եմ միշտ ողորմած դէպի այդ ժողովուրդը, որովհետեւ իմ նախնիքը նոյնպէս հայեր են եղել և մեր ընտանիքի մէջ դեռ պահուել են այդ ազգի բարոյականութեան նշոյնները: Ես, իբրև վեզիւր, միշտ աշխատել եմ մեղմացնել իմ բռնապետի անգլիութիւնը, և որքան կատարողացի եմ, ազատել եմ քրիստոնեաներին նրա կատաղութիւնից: Ոչ թէ նրա համար, որ ես մի սուսնձին համակրութիւն ունեի դէպի քրիստոնէութիւնը, ոչ, այլ առաւելապէս այն պատճառով, որ քրիստոնեաները մեզ համար լաւ հպատակներ էին, մեր կաթնասու կոյնէն էին, պէտք էր ինսպք տանել նրանց վրա: Ես բաւական փաստեր ունեմ իմ խօսքերի ճշմարտութեան մասին, բայց աւելորդ եմ համարում մի առ մի յիշել: Շատ անգամ հայերի վերաբերութեամբ իմ միջամտութիւնները, իմ բարեխօսութիւնները ենթարկել են ինձ իմ բռնապետի բարկութեանը, մինչև անգամ պատժին: Հէնց այս դիշեր նա հրաձայնեց ինձ արտասարկել, և ինձ այս առաւօտ հրապարակի վրա պիտի գլխատել տար, եթէ յաջողութիւնները նրա կողմը լինէին:

Արքայազնը դարձեալ դժուարանում էր հաստատ նրա խօսքերի անկեղծութեանը: Վեզիւրը մտեցաւ, բռնեց նրա փէշից և իր ազդարար աչքերը դարձնելով նրան, ասաց.

— Վնդունեցէք իմ աղաչանքը. թող բարութիւնը և առաքինութիւնը վարձատրված լինի, դրանով

դուք կը սովորեցնէք մարդիկներին լաւի լինել:

— Բարութիւնը և առաքինութիւնը պէտք է վարձատրել, պատասխանեց սրբազանը: — Բայց նախ քան խոստանալը, թէ կարող եմ կատարել ձեր խնդիրը, ես հարկաւոր եմ համարում մի բան հարցնել ձեզանից, յուսով եմ, որ անկեղծութեամբ կը պատասխանեք:

— Հարցրեք:

— Գուր ինչ տեսակ յարաբերութիւններ կը պահպանէք մեզ հետ մեր այդ բոլոր կուրիներից, մեր յաղթութիւններից յետոյ:

— Ես կը մնայ ձեզ անհաշտ թշնամի:

— Իսկ հայ ժողովրդի վերաբերութեամբ:

— Կաշխատեմ կրկին մեր իշխանութեան տակ ձգել:

— Իսկ մահմետական ժողովրդի վերաբերութեամբ:

— Կաշխատեմ նրանց զրգուել ձեր դէմ, որ թօթափին օտարի լուծը: Յուսով եմ, որ դուք չէք դատապարտի իմ մէջ այդ սէրը դէպի իմ կրօնակիցները, որովհետեւ մի և նոյն սէրը ունէք դուք ձեր ժողովրդի վերաբերութեամբ:

— Ես յարգում եմ ձեր անկեղծութիւնը, ասաց սրբազանը: — Բայց դուք մի բոլոր առաջ խոստովանվեցաք, որ ձեր նախնիքը հայեր են եղել:

— Իսկ ես մահմետական եմ և իմ կրօնի նախնիքները իսլամական են:

— Ձեր կրօնը ձեզանից ոչ որ չէ խլում. բայց դուք ազգով հայ էք:

— Մահմետականութեան մէջ ազգ չը կայ. ամբողջ իսլամը մի ժողովուրդ է կազմում:

Արքայազնը վերջ ինչ մտածելուց յետոյ, ասաց.

— Լաւ, ես ցանկութիւն չունեմ բռնանալ ձեր համոզմունքների վրա, թէ ես նրանք ծուռ ու սխալ եմ խոստանում եմ օգնել ձեզ և բէկին ընդունել տալ ձեր խնդիրը, միայն այն պայմանով, որ դուք հէնց այս օրից թողնէք մեր սիրապետած երկիրը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Անցեալ տարվայ վերջը Յունաստանի մէջ կատարուեցաւ պատգամաւորներ ընտրութիւնը: Այս անգամ ընտրութեան պատգամաւորներ նշնայէս և Յունաստանի Հետ նորերուն միացած երկիրներ մէջ: Ընտրութիւններ կանոնաւորութիւնը ստուգելուց և պատգամաւորներ խմբերի կազմելուց առաջ դժուար է դատել թէ ո՞ր կողմը յաղթեց կառավարութիւնը, թէ ընդդիմադրական կուսակցութիւնը: Լրագիրներէ այդ գործի մասին ոչինչ որոշ եզրակացութեան չէ կարելի հասնել, որովհետև ինչպէս կառավարական լրագիրները, նոյնպէս և ընդդիմադրական կուսակցութեան լրագիրները հաւատարմութեամբ են, թէ ընտրութիւնների ժամանակ յաղթեց այն կուսակցութիւնը, որի շահերին այդ լրագիրները ծառայում են: Եթէ հաւատարմը ընդդիմադրականների լրագիրներին, այդ կուսակցութեան առաջնորդ Տրիկուպիսն է, որ մի քանի անգամ յունական միջնարկութեան նախագահ է եղել: Գեկտեմբերի վերջին օրերուն նա վերագարձաւ Աթէնք և նրան դիմաւորեցին նրա կուսակցի բազմաթիւ պատգամաւորներ և քաղաքացիներ: Երբ Տրիկուպիս առաջին անգամ թատրոն գնաց, նրա կուսակցիները նշանաւոր ցոյցեր արին: Այնու ամենայնիւ յայտնի չէ, թէ պատգամաւորների ժողովի մէջ Տրիկուպիսի կուսակցութիւնը, թէ կառավարական կուսակցութիւնը մեծամասնութիւն կը կազմէ: Պարլամենտի առաջին նիստերից կերակայ, թէ արդեօք կրնին կուսակցութեան այժմեան միջնարկութիւնը:

Թէսալոյայի մէջ հրատարակվող լրագիրները հարգում են, թէ այդ նահանգի բոլոր քաղաքներում թիւրքերը ուրախութեամբ մասնակցում էին ընտրութիւններին և նշանաւորն այն է, որ ինչպէս թիւրքերը, նոյնպէս և քրիստոնեաները անկողմնապահութեամբ գնահատում էին ընտրվողի ար-

ժամաւորութիւնները, ուշադրութիւն չը դարձնելով կրօնի գանազանութեան վրա: Այդ պատճառով Թէսալոյայի մէջ ընտրված պատգամաւորների թիւում թիւրքեր էլ կան, որոնցից մէկը շատ ծեր լինելով, գուցէ կը նախագահէ պարլամենտի մէջ նրա բացման ժամանակ:

Լարիսայի մէջ գեներալ Սուցի, նրա ընտրելի և բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ օձվեցաւ մի երկաթուղու շինութեան սկիզբը, որ Լարիսայից պէտք է տանէ Վոյո: Այն ժամանակից, որ Թէսալոյայի միավորութեան կարգադրութիւնների շնորհիւ այդ նահանգի մէջ աւազակութեան ոչ մի դէպք չէ եղել և ամբողջ նահանգի մէջ կարելի է ապահով ճանապարհորդել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մէկ ամբերկական լրագիր հարգում է, որ ամբողջ երկրագնդի վրա 34,274 լրագիրներ և պարբերական թերթեր են հրատարակվում, 10,600,000,000 օրինակ քանակութեամբ: Եւրոպայում հրատարակվում են 19,557 լրագիրներ, Հիւսիսային Ամերիկան երկրորդ տեղն է բռնում—12,400, Ասիայում—775, Հարավային Ամերիկայում—609, Աւստրալիական Ասիայում—661 և Աֆրիկայում—132: Այդ լրագիրներից 16,500 անգլիական լեզուով է հրատարակվում, 7,800—գերմանական լեզուով, 3,850 ֆրանսիական և 1,600-ից ավելի սլաւոնական լեզուով: Իւրաքանչիւր օր դուրս են գալիս 4,020 հրատարակութիւններ, չարաթիւ մէկ անգամ և ավելի պակաս—8,508:

«Voltaire» լրագիրը հարգում է հետևեալ պատմութիւնը: Մայրը իւրաքանչիւր օր իր աղջկան նախաձայնելի համար մէկ խնձոր էր տալիս, որ նա իր հետ տանում էր ուսումնարան: Մի անգամ աղջիկը խնձորը յետ ընկեց: «Մնչ է պատահել քեզ, հարցնում է վախեցած մայրը, արդեօք ստո՞ղջ ես դու:—Առողջ եմ, մայրիկ, բայց իմ բնկերունքն, իմանա, պատժված է, նրբաբան նախաձայնելի համար չոր հացի կտոր տուլին»:

«Ռեհմն Բնու» նրա հետ չը բաժանեցիր իրեն: «Մենք միասին կերանք նրա հացը», պատասխանեց աղջիկը:

Ֆրանսիայի հուշակաւոր բանաստեղծ Վիկտոր Հիլգոն Անգլիայում ֆրանսիական լեզուի վարձակաւորների ժողովի նախագահից հետևեալ հեռագիրը ստացաւ: Ֆրանսիական լեզուի ուսուցիչների կոնգրէսը Անգլիայում, իր առաջին նիստում պարտաւորեցրեց ինձ յանձնել ձեզ ժողովի կողմից միաձայն ընդունված հետևեալ յայտարարութիւնը: Նախ քան մեր պարտաւորութեան սկսելը, կարողացաւ մեր շնորհակալութեան, սիրոյ և զարմայան զգացմունքներ մեծ բանաստեղծին և մարդասերին, Վիկտոր Հիլգոն: Ռեզորիում ենք նրան մեր առ ի սրտէ ողջոյնը նախագահ Շոյ:

Ներերումս Պեղաժում, Լճոյնի մօտ, երկու մօրմունք մտածեցին քարոզել իրանց վարդապետութիւնը, յուսալով իրանց բազմակրթութեան նկարագրութիւններով գրաւել անգլիական փոքրիկ քաղաքի գեղեցիկ սուր: Բայց նրանք սաստիկ բարեկարգեցին: Հէնց որ նրանք բացատրեցին, թէ բանը ինչու է, իսկոյն ունկնդիրները բարձրացան էտարազի վրա և սկսեցին ծնծել քարոզիչներին, պատուեցին նրանց չորերը, զլխարկները դեցին և առհասարակ լաւ քօթակ տուեցին: Թշուառ քարոզիչները փախուստ տալով հալիւ կարողացան աղտովել այդ կրիտիկական դրութիւնից: Հալիւ թէ նրանք կրկին անգամ համարձակվին զարգացնել իրանց թէօրիաները անգլիական հասարակութեան առաջ:

Բ. Բայտ Լճոյնում մէկ մատանի ձեռք բերեց, որը մի քանի դարեր շարունակ Հնդկաստանի իշխանների ձեռքում էր գտնվում: Նա նշանաւոր է նրանով, որ նրա վրա փորագրված է հետևեալ արաբական վերնագիրը (Օ. Ալի): Այդ գործը ինչպէս կրեւում է, վերաբերում է XIII դարին Կրիտասոսից առաջ:

«Herold» լրագիրն Պոզնանից գրում են, որ 10 տարի առաջ Հէնրիկոս Բօզէ անունով մէկ ստիբիլ սպանվեցաւ: Նրա սպանութեան մէջ մեղադրված զբաշար Ֆիլէրին դատարանը մահուան պատժի դատապարտեց, բայց յետոյ այդ պատժը ցմահ բանտարկութեամբ փոխարինեց, ուր և տաս

—Այդ պայմանը ես ընդունել չեմ կարող: —Բայց եթէ ընկել լսելու լինի ձեր վերջին խօսքերը, ձեզ գլխատել կը տայ: —Ինձ համար մի է նոյն է, թող ինձ գլխատել տայ, բայց ինչպէս մնացածներին: Մինչ այդ խօսակցութեան մէջ էին, նկատեցին, որ բանակի միւս ծայրից յայտնվեցաւ ընկեր, նստած իր ձիւնի պէս սպիտակ նոյնի վրա: Նրա մի կողմից, նոյնպէս ձիւնաւոր, գնում էր Միլիթար սպարապետը, իսկ միւս կողմից՝ Թորոս իշխանը: Թիլիսպազանների խումբը հետևում էր նրանց: Յաղթութեան իշխանը հանդիսաւոր կերպով դիմում էր դէպի դեռ ևս միացող ընկերաբաղաւոր: —Դա ո՞վ է, հարցրեց վեղիբը, շարունակելով նայել: —Բէկը, պատասխանեց սրբազանը.—Երևի, դու ինձ է բերող տեսնելու: Վեղիբը վեր կացաւ, դառնութեամբ ասելով. —Գնում է տեսնելու, թէ ինչպէս են կոտորել, ինչպէս են ոչնչացրել... և եթէ մի բան պակաս է մնացել, լրացնել տայ... Գրա մէջն է յաղթութեան փառքը և յաղթողի անասման բերկերութիւնը, —արիւնով գովացնել իր վրէժխնդրութեան ծարաւը... Ես էլ կը գնամ, կընկնեմ նրա ձիւն ոտների տակ, երես կը քսեմ փոշիներին, կաղաչեմ, կը պարտաւեմ, որ բաւականանայ եղածով, որ գաղաբնէ արիւնհեղութիւնը... —Գնացէք, ձեր մենակ գնալը ավելի յարմար է, պատասխանեց սրբազանը.—բայց ձեր խօսքերի մէջ զգուշ եղէք, աշխատեցէք չը բարկացնել նրան: Իսկ ես ձեր ետևից կը գամ, կ'օգնեմ ձեզ իմ բարեխօսութիւնով: Վեղիբը հետապնդաւ: Իր կենքում կրէր մի այսպիսի ստորութիւն յանձն առած չէր նա: Գաւուրի մօտ աղերսարկու լինել, գաւուրից դիմել ինձ խնդրել,—այդ անարգութեամբ մահուաբեր ըն-

պանիչ էր նրա համար: Բայց նա յանձն առեց այդ ծանր գործարկութիւնը բազմաթիւ մուսուլմանների կիսնքը փրկելու համար: «Գինիլից դարձած քաջախիւր ավելի թունդ է լինում... մտածեց սրբազանը և տիրութեան մըռայր անցաւ նրա բազմահոգ դէմքի վրա: Այդ մարդը, որպէս ինքը խոտորակնեց, նայոյ ծայրամիջ է: Նոր կրօնի մարտաւարութեան հետ միացրել է և հայի խելքը: Դա շատ վտանգաւոր բան է: Հայի խելքը հայի դէմ ավելի կորստաբեր հետևանքներ է ունենում, քան թէ օտարինը: Հայը ընդունելով մի նոր կրօն, ավելի խաւարաւոր, ավելի վեհասակար է դառնում իր ազգութեանը, քան նոյն կրօնին պատկանող ամբողջ հասարակութիւնը, որը մեր ազգից չէ: Ոչ որ այնքան չէ վնասել հայոց հայրենիքին, որքան մեր արիւնակից դաւաճանները, որոնք մեզ թողնելով, անցան թշնամու կողմը: Կնչից է այդ: Գժուար է հասկանալ, բայց դժբախտաբար այդպէս է... Նա դուրս եկաւ իր վրանից և սկսեց գնալ ծերունի վեղիբի ետևից: Արեգակը բաւական բարձրացել էր ճորիգունի վրա, բայց ձորի անտառապատ խորութեան մէջ տակալին ջերմութիւնը չէր զգացվում: Վարդաբան խնամա գողորջները բարձրանալով ծմակների միջից, սեղ-տեղ բամբակի աճողին կտորտանքի նման խնամում էին և ձիւնափայլ մտախառնել ձե էին ստանում Ամնուրեք տիրում էր լուսութիւն և անդրբութիւն. այլ ևս չէին լսվում գեղեկային հրացանաձգութիւնների ձայները: Բէկը, աչքերը յառած դէպի բերդը, իր երկու ուղեկիցների հետ, առաջ էր գնում: Նրա ստան դէմքի վրա չէր երևում ոչ յաղթողի ուրախութիւնը և ոչ էլ անբաւական մարդու դժգոհութիւնը, այլ մի անսակ խորին մտածութիւն, որը, կարծես, արտայայտելիս լինէր այդ միտքը. «Եւս է, այդ բոլորը շատ լաւ է, բայց դրանից յետոյ ինչ պէտք է անել...»

Նա դարձաւ դէպի Միլիթար սպարապետը, ասելով. —Այդ բերդը բաւական յոյնացրեց մեզ, նա միշտ կը մնայ այդ ճանապարհի վրա որպէս մի դժուարարձակելի հանգույց և որպէս մի մեծ խոչընդոտ, եթէ նրան ողջ թողնելու լինենք: Պէտք է այդ հանգույցը բոլորովին ոչնչացնել: —Ինչու ոչնչացնել, պատասխանեց սպարապետը.—քանի որ թշնամու ձեռքում էր, նա կարող էր մեզ խոչընդոտ լինել, իսկ այժմ, երբ ընկաւ մեր ձեռքը, նոյն ծառայութիւնը կարող է մատուցանել և մեզ: —Այդ իրաւ է: Բայց ես նպատակ ունեմ շիւնել տալ մի նոր բերդ, այստեղից հեռու, մի ավելի յարմար դիրքի վրա... Գեռ չաւարտած իր խօսքը, բէկը նկատեց, որ մի մարդ բռնեց նրա ձիւն տանքը, ասելով. —Ինչպէս, ինչպիսիք օճակ... Բէկը կանգնեցրեց իր ձիւն: Նա չորեց գետնի վրա, և արտասուակ աչքերով ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով, ստաց. —Աստուած իր քաջերին յաղթութիւն է շնորհում և նրանց հօրը ձեռքը բարձրացնում է ազգերի ու ժողովուրդների վրա: Նրանց ձեռքով խորտակում է Ամնուրեք իշխողների գաւազանը և ոչնչացնում է նրանց զօրութիւնը,—այն իշխողների, որ ունակու են անում Աստուծոյ սահմանած օրէնքները, որոնց հիւնն է արդարութիւնը, որը կը իւն է ամեն իրաւունքներին: Գուր, իշխան, Արդարադատի բարկութեան սուրբ էք, որով կանցաւ Նա պատժել մեզ մեր մեղքերի համար: Բայց Աստուծոյ ուղարկած պատուհասը իր սահմանն ունի: Նա թէև տալիս է հօրների ձեռքում իր վրէժխնդրութեան սուրբ, բայց մի մոռացէք, ինչպէս, որ այդ սրի երախակալը գթութիւնն է: Նա թէև յաղթութիւն է շնորհում իր քաջերին, բայց մի մոռացէք, ինչպէս, որ այդ յաղթութեան պատկը ներսումն է: Այժմ ձեր ոտքերի փոշու տակ ընկած մարդը ձեզանից այդ

տարի մնաց: Այժմ յայտնվում է, որ նա կատարելապէս արդար է, որովհետև գտնվել է իսկական սպանողը, գործաւոր Հերման Շտեյնմանը, որը և մահուան պատժի է դատապարտված, իսկ անմեղ գոհին արձակեցին ներողութիւն խնդրելով, որ սխալվեցին: Լաւ սխալ է և լաւ է, որ մահուան պատժը ցմահ բանտարկութեան էր փոխված:

Սան-Ֆրանցիսկոյց հեռագրով Նիւ-Եօրկ հարդրեցին այն լուրի մասին թէ մէկ կին, երկար ժամանակ ամուրի լինելով, վերջապէս, մի անդամից իրական սեռի վեց գեղեցիկ կազմված և առողջ մանուկներ ծնեց:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յունվարի: Հեռագիրները Լահորից հարդուում են, որ Հերատի մէջ ապստամբութիւն է սկսվել:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յունվարի: Ծոտար լրագիրները հաստատում են, որ արաբները գործերի միջնարկութիւնը ցաւակցութիւն յայտնեց Աւստրիային Վիորոլի մի ճառի առիթով: Չինական սահմանական իշխանութիւնը զաշնագրի հակառակ բռնում է ռուսաց քարվանդներ:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յունվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 75 կ., երկրորդ 91 ռ. 37 կ., երրորդ 92 ռ., չորրորդ 91 ռ. 25 կ., հինգերորդ 90 ռ. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ռ., երկրորդ 216 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 50 կ., երկրորդ 89 ռ. 87 կ., երրորդ 89 ռ. 87 կ., ոսկի 8 ռ. 4 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լճոյնի վրա արժէ 24,53 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 80 պֆ., Փարիզի վրա 258 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի արամադրութիւնը դանդաղ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

Երկու ողորմութիւնն է խնդրում.— դիմութիւն և ներում: Որովհետև Աստուած դիմում է և ներող: Թող օրհնեալ լինի Նրա ամենակարողութիւնը, թող անպակաս լինի ձեզանից Նրա շնորհը:

Բէկը որքան էլ խոտարկու լինէր, որքան էլ զայրացած լինէր իր հայրենիքի թշնամիների վրա, այսու ամենայնիւ, ձերուսու խօսքերը աղբեցին նրա սրտին, և դառնալով դէպի սպարապետը, հարցրեց. —Ո՞վ է այդ մարդը: Այդ միջոցին վրա հասաւ Ներսէս սրբազանը, և առաջ անցնելով, պատասխանեց. —Դա Աւրամադ-Կուլի-խանի վեղիբն է, այն բռնապետի, որը իր ամբողջ աչք դիւրս գնող օգի մէջ: Մի քանի րօպէ առաջ ինձ մօտ էր: Ես երկար խօսեցի դրա հետ մահապատկանների դարերը բարբարոսութիւնների մասին: Նա համաձայնվեցաւ ինձ հետ և արդարացրեց մեր վարմունքը: Ընդունեցէք, բէկ, ձերունի վեղիբի խնդրը, հրամայեցէք զաղաբնից կոտորածը: Թող ձեր շնորհն ու ողորմածութիւնը լինի վարձատրութիւն այդ մարդու այն ծառայութիւնների համար, որ իր պաշտօնավարութեան ընթացքում կատարել է այստեղի հայերի վերաբերութեամբ: Նա իր բոլոր բարերարութիւնները պատմեց ինձ և նրանց անկեղծութեան մէջ ես կատարեմ յուսնեմ:

—Ես կը հրամայեմ զաղաբնից կոտորածը, բայց բերդը պէտք է քանգլի, ասաց բէկը, և դառնալով դէպի ծերունի վեղիբը, ասեցացրեց. — Հէնց այս օրից, վեղիբ, դու պիտի առնես քեզ հետ այդ բերդում մնացած մահապատկաններին և պիտի դադարեց դէպի Պարսկաստան: Վեղիբը կամեցաւ մի խօսք ևս ասել, բայց սրբազանը ակնարկեց նրան լուր: Բէկը անցաւ դէպի բերդը:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրկին հրատարակուող մեր յարգելի հայուհիների ուշադրութիւնը մեր բացանելու Ձեռի եւ ԿԱՐԻ ԱՐՋԵՏԱՆՈՅԻ վրա, յայտնելով սովորելու պայմանները:

Ձեռնար սովորելու համար իւրաքանչիւր ցանկացող կը վճարի 60 ր.:

Միայն ձե սովորելու համար 25 ր.

Ձեռնը առանձին կարելի է սովորել 30—

40 դասի ընթացքում:

Ցանկացողները թող բարեհաճեն զիմել Գանսօվի փողոց կենտր Քէհրուիթեանցի տուն № 10 ձեռի և կարի ուսուցիչ Գ. և Շ. Արեւանցի, որտեղ ընդունում են պատւերներ:

2—3 (2)

«ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻՍԱՊԱՆՈՒԹԻՒՆ» ԲՈՒԽԱՍԻՏԵՐԻՍՅՑ

Ամենամեր և գործնական ձեռի, բացարձակ կանոններով և բացարձակամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մանր մամուլի տակ, զերբ կը բաղանայ մտ 400 երեսնց. և մաքուր սովորութեամբ, որոնք հետ միասին կը լինի և մի փոքրիկ վերասանութիւն «Գող» վերնադրով և «Իմ երգերը» յաւելուածով, ցանկացողները թեֆլիսում կարող են գրուել «Կենտրոնական» և «Ջորջարիայ Գրիգորեանցի գրականատնոցներում և Թաղէոս Տէր-Միքայէլեանցի մտ, Բազու Բասիլիկ մագազինում, ինչ մտ և «Մարդ ընկ» գրագրանում: Գաւառական քաղաքներում այն անձանց մտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. սովորութիւննց յետոյ 3 ր.: Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն զբքի վերջում:

Հրատարակիչ Աբէլ Գ. Ապրեանց

ԾԱՆՈՒԹՄ ԵՆ 25% ԷԺԱՆ

քան թէ ուրիշ տեղ. թէ՛, կակաօ, ՇՕԿՈՒԱԿ, բիսկիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոկալներ, թէ՛ յամաններ, սուգօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, Իրես լուսնալու ամաններ, կոկտեյլներ, ՋՅՏԱՍԿԱՆՆԵՐ, զգալներ, գանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՈՂՎԵՐՆԵՐ, մէջբակալներ, կլէօնկա, թԱՄԲԵՐ, ամաններ, ութմաներ, ՄԱՀՃԱՍԿԱՆՆԵՐ, Երեւոյի զինք, թաշկինակներ, կանանց գուրբաներ, մարդկերանց գուրբաներ, տուպիտի սապօն, հոտաւէտ ջրեր, շերտա, ցիտրան մագնէզիտ, խինայի գինի, պորտփէյն, խորես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ: ՆՈՅՆ ՏԵՂԸ փոճառակներ: ԲՆԻՑ Քանակութեամբ ծախում է թէ՛ թ. պուրկերով 40, 46, 52, 58, ր., իսկ Փուստերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենարարձը թէ՛ յը Փուստը 2 ր. քաշը ԱՌԱՆՅ ԹՎԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՋՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէլգիական 4—34 ր., ԲՈՒԼԳՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբ բեր 65 ր., շեֆիլդի գանակներ 3 ր. 50 կ. գրեթէներ, պրօֆաներ կրասպոյով, Ֆիլարաններ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէլգիական թեֆլիսում:

90—100

Въ Редаціи газеты

«МШАКЪ»

Продается

«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ

Цѣна 25 коп.

«ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ»

Այս ֆիլմայով բանարով երևանումն գրականատնոց կցելով նորա հետ ուսումնարանական, զբանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն ես առնում տալ միշտ յիշեալ սպրանքներից եւանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի զբանատներին և ուսումնարաններին շատ ձեռնառ զներով և պայմաններով:

Ընդունում եմ սպագրել տալու բլանկներ, ծանուցադրեր, յայտարարութիւններ, այցելատուներ, բրօշուրներ, նաև զբքեր, ամենարժան վարձով:

Ինչ մտ է գտանվում իմ հրատարակած «Տնային բժշկական մարմնամարզութեան» զբքովի պահեստը:

Իմ հասցէն. Գ. Զրивань. Н. Симеонянцу, магазинъ. «Другъ-Дѣтей».

ԱՐԻԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ» մասնկազան զբքովի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս զբքովը ընդունել էր սպագրելու Հայերէն զբքերի հրատարակումը թեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ սպագրելու: Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տարերով:

Գինն է 20 ԿՈՊԵԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրականատնոցից և թէ՛ թարգմանողից՝ հետեւեալ հասցէով:

Тифлисъ—на Авлаба, м Ивану Петровичу Назарианцу.

Վ ա ճ ա ո Վ ու ճ է ն 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 երեսապիլի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բոկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 սուկոց 8—40 կ. հատը, 10,000 պինդներ 5 կ., 5,000 շիշ պօրտփէյն և խեբես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գրեթէ մատիտներ և զրչակներ 8 կ. գրեթէնը, 2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. Փուստը, 1000 Փուստ լէպէօզկա 50 կ. Փուստը, 600 անդրիական բէլգիական 1 ր. 4—34 ր. հատը, 300 անդրիական հրացաններ 20—100 ր. հատը, գրասպարիկօ, ալբոմներ, ձեռագրայ պալաններ, զլխարկներ և ր, փարտիկներ, հաղուստ կէս գնով: Ծախում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ: Եղի տեղը ծախում է ծովային ԽՈՏ պուրկը 2 ր. 50 կ.: 46—60

«ԱՐՉԱԿԱՆՔ»

Ներկայ 1882 թուականի փետրվարի 21-ից կառավարութեան թողուցութեամբ կը հրատարակվի գրականական և քաղաքական շարժանքով «ԱՐՉԱԿԱՆՔ» անունով պ. Արգար Յովհաննիսեանի խմբագրութեամբ:

«ԱՐՉԱԿԱՆՔ» դուրս կը գալի կիւրակէ օրերը երկու թերթի մեծութեամբ:

«ԱՐՉԱԿԱՆՔ» ներկայ տարուայ բաժանորդագիրը՝ տարուայ սկզբից չը հրատարակվու պատճառով, է ի ն Գ ուրիչ է:

«ՓՈՐՁ» այն բաժանորդները, որոնք իրանց բաժանորդագիրը վճարած ունեն անցած 1881 թուականի երկրորդ կիսի համար, 1882 թուականի ընթացքում «ՓՈՐՁ» փոխանակ «ԱՐՉԱԿԱՆՔ» կը ստանան, եթէ միայն բարեհաճեն կանխօրէն յայտնել խմբագրութեան իրանց ցանկութիւնը և հասցէները:

«ԱՐՉԱԿԱՆՔ» կը հրատարակվի նաեւս պրոգրամայով. —

- I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնսդրական միջոցների մասին:
- II. Առաջնորդող յորուածներ ազգային և հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:
- III. Թղթակցութիւններ հայրենակ տեղերից, ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագրների տեղեկութիւնների և կարծիքների:
- IV. Տնտեսական և առևտրական հարցեր փոխարքայութեան մէջ:
- V. Յօդուածներ ազգային կրթութեան վերաբերութեամբ:
- VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանական հասարակական և քաղաքական նշանաւոր անցքերի մասին:
- VII. Կրթական և մատենագիտութիւն:
- VIII. Յիշխածոն:
- IX. Խառն լուրեր:
- X. Յայտարարութիւններ:

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵՐԵԻ (աթուներ և բազկաթուներ) ծախում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաբարաքցիք կարող են զիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

135—150

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

«ДОНСКАЯ ПЧЕЛА»

ГОДЪ СЕДЬМОЙ.

на 1882 годъ

Съ 1-го января 1882 года «Донская Пчела» будетъ издаваться по той-же программѣ какъ издавалась въ предыдущіе шесть лѣтъ, два раза въ недѣлю. Редакція, по мѣрѣ силъ и возможности выношая обязанности провинціальной прессы, находитъ, что «Донская Пчела» уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:

Съ доставкою въ Ростовѣ н/Д.	Съ пересылкою иногороднымъ
На годъ..... 6 руб.	На годъ..... 7 руб.
> 1/2 года..... 3 " 50 к.	> 1/2 года..... 4 " "
> 3 мѣсяца..... 2 " "	> 3 мѣсяца..... 2 " 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи «Донской Пчелы» въ Ростовѣ на Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абрамянъ. Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію «Донской Пчелы» въ Ростовѣ на Дону.

Редакція покорнѣше проситъ и иногородныхъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полныя адреса четко и разборчиво.

Вѣсьмъ годовымъ подписчикамъ, прилавшимъ до 25-го декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, «ДОНСКІЙ-АЗОВСКІЙ» русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-издатель И. А. Теръ-Абрамянъ

5—5

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., Ճըճողներ 1 ր., Ճարվող աթուներ 1 ր. 50 կ., ՓԱՑՑ-ԱԹՈՒ 4 ր., ԲԱՉԿԱԹՈՒ-ՄԱՀԱՍԱԿ 10 բուրլ և աւելի, թէ՛ յի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեղա ծխողների համար 60 կ. Փուստը, անդրիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ: 10,000 գոյգ գուրբաներ 25 կ.—ից գոյգը, 10,000 գոյգ կանանց ԳՈՒՂԱՆԵՐ 30 կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀԱՍԱԿԱՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բոնազէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պատուհան 40 կ.—1 ր., 300 հաստ բէլգիական 4 ր.—35 ր., 700 արթմ ԿԻՍՍՎԵՆՈՎ, 10,000 Փուստ թէ՛ թ. թԵՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար Ծախում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ: 78—100

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Կուրիա, տ. Հախվերդեանի:

Հիւանդներին ընդունում են ամենայն օր: Առաւօտեան 9—10 ժ. Լ ուն կ ե վ ի շ—Աչքի, վիճակական և խրոնրդիական հիւ.— Բ ու զ կ օ վ ս կ ի—կանոցի և ներքին հ.— 10 1/2—12 ժ., Շ ա հ ա զ ի զ ե ա ն ց—ներքին հ.— կին-բժիշկ Ս ա մ ո յ Լ օ վ ի շ—կանացի հ.— երեկոյեան 5 1/2—7 ժ. Պ ա վ Լ օ վ ս կ ի—հրեկայոց և բզի հ.—

Շարքթ օրերը—առաւօտեան ծաղկահատու թիւն.—երեկոյեան կոնսուլտացիա (ընդհանուր բժշկական խորհուրդ): Գ ի շ ե ր օ թ ի կ հ ի շ Լ ա ն զ ն ե ր: Չքաւո ը ն ե ր ի ն խորհուրդը արվում է անվարձ:

Հիւանդանոցի գերեկատը Պ ա վ Լ օ վ ս կ ի (հ. շ. եր). 12—1